ԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| **ԳԼՈՒԽ 1. Վարչական արդարադատության մատչելիությունը Հայաստանում** | |
|---|---|
| **Վարչական մարմին իրավական եզրույթի սահմանումը և դրա ազդեցությունը վարչական արդարադատության մատչելիության վրա** | ՎՀՎՎ մասին օրենքի «վարչական մարմին» եզրույթի իրավական սահմանման մեջ ավելացնել հետևյալ արտահայտությունը. «ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է պետական գործառույթ»: |
| **Վարչական դատարանի իրավազորությունը հանրային լիազորություններ իրականացնող մասնավոր անձանց «վարչարարության» նկատմամբ** | ՎԴՕ-ի 3-րդ հոդվածում կատարել լրացում, որն անձանց թույլ կտա հանրային գործառույթներ իրականացնող ոչ պետական մարմինների կողմից իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմել ՎԴ:<br>Պետությունն իր գործառույթները մասնավոր մարմիններին պատվիրակելիս պետք է հստակ սահմանի, որ այդ մարմինները պատվիրակված (մասնավորեցված պետական) գործառույթներն իրականացնելիս գործելու են որպես հանրային (վարչական) մարմիններ:<br>ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանել, որ բոլոր դեպքերում, երբ պետությունն իր հանրային գործառույթների իրականացումը պատվիրակում է մասնավոր անձանց՝ անկախ պատվիրակման ձևից (պայմանագիր, օրենսդրական ակտ և այլն), ապա շահագրգիռ անձանց իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն իրականացվում է հանրային իրավունքի նորմերի միջոցով:<br>ՀՀ Վճռաբեկ դատարանը իր որոշումներով պետք է ապահովի օրենքի միատեսակ կիրառությունը՝ «պետական գործառույթ» եզրույթի իրավական բովանդակության առումով՝ սահմանելով որոշակի չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տարանջատել պետական ու մասնավոր գործառույթները |
| **Հայցադիմումը վարույթ ընդունելիս միասնական պրակտիկայի բացակայություն** | Օրենքով սահմանել «սխալ» հայցատեսակ ներկայացնելու իրավական հետևանքները՝ միաժամանակ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը:<br>«Սխալ» հայց ներկայացնելու դեպքում իրավական հետևանքների կիրառումը պետք է տեղի ունենա հայցը վարույթ ընդունելու փուլում:<br>Օրենքով նախատեսել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո հայցադիմումներ ներկայացնելու իրավական հետևանքը:<br>Բացառել ՎԴ-ի կողմից ՎԴՕ-ով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցադիմումների ընդունման մերժումը՝ ՎԴ-ին ենթակա չլինելու պատճառաբանությամբ:<br>Վերախմբագրել ՎԴՕ-ի 90-րդ հոդվածը, որը կբացառի ի սկզբանե ՎԴ-ին ոչ ընդդատյա գործերի վարույթ ընդունելը, իսկ հետագայում դրանց կարճումը:<br>Ապահովել հայցադիմումների ընդունումը մերժելու պրակտիկայի միասնականությունը:<br>ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ պետք է սահմանի այն սկզբունքները, որոնց համաձայն քաղաքացիական և վարչական վեճեր քննող դատարանները |

| | |
|---|---|
| | պետք է որոշեն վեճի մասնավոր կամ հանրային իրավական բնույթը:<br>Ստեղծել վարչական և ընդհանուր իրավասության դատարանների կողմից վեճի բնույթի վերաբերյալ անհամաձայնության դեպքում առարկայական ընդդատության հարցի լուծման իրավական մեխանիզմ:<br>Քննարկել ՀՀ իրավական համակարգում վարչական կամ հանրային իրավական պայմանագրի ինստիտուտի ներդրման հարցը, քանի որ դրա առարկան հանրային իրավական է (քաղաքաշինություն, ընդերքի օգտագործում և այլն), իսկ դրանից ծագող վեճերի քննությունը իրականացնել ՀՀ ՎԴ-ում: |
| **ԳԼՈՒԽ 2. Հայցադիմումների տեսակներն ըստ ՀՀ ՎԴՕ-ի, օրենսդրական բացերը և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները՝ արդարադատության մատչելիության տեսանկյունից** | |
| Նախատեսել սխալ հայց ներկայացնելու հետևանքները: Եթե ՎԴ-ը վարույթ է ընդունել և քննել սխալ հայց, ապա ճիշտ հայցը ներկայացնելու ժամկետները պետք է համարվեն վերականգնված:<br>Նախատեսել առարկության ներկայացման հնարավորություն այն դեպքերում, երբ անձը տուգանքը վճարելու համար օրենքով նախատեսված ժամկետներում վճարել է այն:<br>Միջոցներ ձեռնարկել դատավորների և փաստաբանների՝ վարչական հայցերի վերաբերյալ գիտելիքների խորացման ուղղությամբ:<br>Նախատեսել զուգորդող վարչական ակտերի բողոքարկեման հնարավորություն. ՎԴՕ-ի 65-րդ հոդվածը լրացնել հետևյալ արտահայտությամբ «…կամ զուգորդվող վարչական ակտի՝ անձի համար ոչ բարենպաստ (միջամտող) դրույթները»: | |
| **ԳԼՈՒԽ 3. Ապացույցները վարչական դատավարությունում** | |
| **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պրակտիկ կիրառությունը և Վարչական ակտի իրավաչափությանը վստահելու իրավունքի պաշտպանությունը ՀՀ վարչական արդարադատությունում** | Ապացույցների տեսակները սահմանելիս դրանց շարքում նախատեսել կողմի՝ տեղեկատվության անմիջական կրողի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ:<br>Բացառել ներկայացուցչի բացատրությունների՝ որպես կողմի ցուցմունք ապացույցի օգտագործումը: Ապահովել յուրաքանչյուր դեպքում վարչական մարմնի ներկայացուցչի ցուցմունքի ստացման օրինականությունը (որպես վկա ներգրավումը և սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացումը): Վարչական մարմնի ակտերը, գործողությունները, անգործությունը վիճարկելիս անձի վրա պետք է դրվի ոչ թե իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ցանկացած հանգամանքի ապացուցման բեռ, այլ այն հանգամանքների, որոնք բարենպաստ են անձի համար: Ապահովվել պրակտիկայում դատավորների կողմից ապացուցում պահանջող փաստերի շրջանակի բովանդակային պարզումը և ապացուցման բեռի ճիշտ բաշխումը:<br>Ապահովել դատավորների կողմից իրենց պարտականությունների կատարումը, մասնավորապես՝ վիճելի իրավահարաբերությունների բնույթի և կիրառման ենթակա օրենսդրության պարզումը:<br>ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի առնչությամբ քննարկել հետևյալ լուծումները կամ այլ լուծումներ՝ նշված սկզբունքների պահպանմամբ. Այն դեպքերում, երբ անձը ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի համաձայն ստացել է վարչական ակտ և կարող է ինքնուրույն, առանց այլ վարչական մարմիններ դիմելու ձեռնամուխ լինել իրավունքի իրականացմանը, ապա իրավունքի իրականացմանը ձեռնամուխ լինելուց առնվազն 15 օր առաջ այդ մասին տեղեկացնում է վարչական ակտն ընդունելու իրա- |

| | |
|---|---|
| | վասություն ունեցող վարչական մարմնին: Այդ նպատակով անհրաժեշտ է ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետը լրացնել հետևյալ արտահայտությամբ. «դրա մասին առնվազն 15 օր առաջ ծանուցելով համապատասխան վարչական մարմնի»: Նման ընթացակարգ նախատեսելու դեպքում պետք է կարգավորել նաև, թե որն է 15 օր առաջ վարչական մարմնին չծանուցելու հետևանքը, քաղաքացու համար: Այն դեպքերում, երբ անձը չի կարող ինքուրույն, առանց համապատասխան վարչական մարմնին դիմելու, ձեռնամուխ լինել ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածով տրված վարչական ակտից ծագող իրավունքի իրականացմանը, և հայցադիմում է ներկայացնում ՎԴ ընդդեմ որևէ վարչական մարմնի՝ նպատակ ունենալով ապահովելու այդ իրավունքի իրականացումը, ապա ՎԴ-ը, պարզելով, որ անձի վկայակոչած իրավունքը ծագել է ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի ուժով՝ այդ մասին ծանուցում է վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնին: Ծանուցումից հետո 15-օրյա ժամկետում ծանուցված վարչական մարմինն իրավունք ունի ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի 2 կետի «2» ենթակետի հիման վրա դիմելու ՎԴ: Վարչական մարմնի կողմից նշված ժամկետում ՎԴ չդիմելու դեպքում՝ ՎԴ-ը քննում և ըստ էության լուծում է վարչական գործը, որից հետո նշված վարչական ակտը դառնում է անվիճարկելի՝ այն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի համար: ՎԴ-ը իրավունք չունի առանց համապատասխան վարչական մարմնի հայցադիմումի քննել հայցվորի՝ ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի հիման վրա տրված վարչական ակտի իրավաչափություն: |
| **ԳԼՈՒԽ 4. Անվճար իրավաբանական օգնությունը վարչական գործերով** | |
| Բարելավել անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթները՝ վարչական արդարադատությունն առավել մատչելի դարձնելու նպատակով: Առաջարկվում է ընդունել հատուկ օրենք՝ անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ, որը կնախատեսի վարչական գործերով անվճարունակ անձանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորություն և անվճարունակության գնահատման հստակ և օբյեկտիվ չափանիշներ: | |
| **ԳԼՈՒԽ 5. Վարչական գործի բանավոր և հրապարակային քննության իրավունքը ՀՀ վարչական դատավարությունում** | |
| **Գրավոր դատաքննությունը ՎԴ-ում** | Փոփոխել ՎԴՕ-ի 108-րդ հոդվածը: Նշված դրույթներում պետք է նախատեսել հետևյալ սկզբունքները.<br>Այն դեպքերում, երբ վարչական գործի քննության առարկան վերաբերում է խիստ տեխնիկական կամ զուտ իրավական խնդրի, և եթե հայցվորին լսելը չի կարող նպաստել գործի հանգամանքների պարզաբանմանը, ապա ՎԴ-ը կարող է որոշում կայացնել արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ: Դատարանի որոշումը պետք է լինի հիմնավորված՝ գործի փաստական հանգամանքներով: |
| **Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը** | ՎԴՕ-ի 153-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով, որը ՎԴ-ին կարգելի վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով իրականացնել գրավոր քննություն՝ վարչական մարմնի հայցադիմումի ակնհայտ հիմնավոր լինելու պատճառաբանությամբ, եթե առկա չէ պատասխանողի կամավոր համաձայնությունը: |
| **ՎԴ-ի որոշման պատճառաբանվածությունը և դրա բողոքարկումը** | Լրացնել ՎԴՕ-ի 125-րդ հոդվածի առաջին մասը 11-րդ կետով, որով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին կդասվի նաև ՎԴ-ի կողմից՝ ՎԴՕ-ի 108-րդ հոդվածով նախատեսված հիմքերով գրավոր քննություն անցկացնելու վերաբերյալ կայացրած դատական ակտը: |

| | |
|---|---|
| **Վարչական գործերի քննության հրապարակայնության այլ խնդիրները** | Ապահովել ՎԴ-ի բոլոր վճիռների հրապարակումը դռնբաց դատական նիստում:<br>Հրապարակայնության սկզբունքի ցանկացած սահմանափակման վերաբերյալ պետք է լինի դատարանի որոշում՝ հիմնված յուրաքանչյուր անհատական գործի հանգամանքների ուսումնասիրության և գնահատականի վրա:<br>ՎԴՕ-ում կատարել լրացում, որը կպարունակի ՎԴ-ի դռնբաց նիստերի ձայնագրման խնդրի իրավական կարգավորումը, որը պետք է հիմնված լինի հրապարկայնության սկզբունքի լիարժեք հարգման և այն կանխադրույթի վրա, որ ձայնագրառումը տեղեկությունների նյութականացման ձև է: Լրացումը պետք է հստակ սահմանի, որ դռնբաց դատական նիստի ընթացքում ձայնագրման հարցի կարգավորման պատասխանատուն նիստը նախագահող դատավորն է, այլ ոչ թե դատական կարգադրիչը: |
| **ԳԼՈՒԽ 6. ՎԴ-ի դատական ակտերի հարկադիր կատարումը** | |
| | Բարեփոխել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կազմակերպման ձևը՝ դատական ակտերի կատարման արդյունավետությունը բարձրացնելու և դրա միջոցով արդար դատաքննության իրավունքն ապահովելու նպատակով: Քննարկել դատական իշխանության համակարգում տեղակայված կամ անկախ հարկադիր կատարման ծառայություն ստեղծելու հարցը:<br>Ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի պետական միջոցների սակավությունը չմատնանշվի որպես հիմնավորում այն դատական ակտերը չկատարելու համար, որոնք պահանջում են վճարում պետական միջոցներից:<br>Ձևավորել վճիռների չկատարման համար պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու պրակտիկա:<br>Ապահովել պաշտոնատար անձանց կողմից վճիռների չկատարման դեպքում քննության արդյունավետությունը և անկախությունը: |
| **ԳԼՈՒԽ 7. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը և պրակտիկայում առկա խնդիրները** | |
| | Օրենսդրությամբ հստակեցնել պատասխանատվության ենթարկելու արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը և ընթացակարգը, քանի որ ՎԴՕ-ով բավարար կարգավորում տրված չէ:<br>Այն դեպքում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն է դիմում վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, հայցադիմումին արձանագրությունը կցելու պահանջ չպետք է ներկայացվի, քանի որ այս դեպքում, ստացվում է, որ անձը պետք է նախ դիմի արձանագրություն կազմելու լիազորություն ունեցող անձին, որպեսզի վերջինս կազմի արձանագրությունը, որը կկցվի հայցադիմումին: Առաջանում է խնդիր. համապատասխան մարմինը կարող է մերժել արձանագրության կազմումը, և անձը ավելի մեծ խնդրի առջև կկանգնի:<br>ՀՀ ՎԴՕ-ի 114-րդ հոդվածը, որը կարգավորում է ՎԴ-ի գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները, չի նախատեսում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դատական ակտի տեսակը: Օրենսգրքում պետք է կատարվի համապատասխան փոփոխություն: |
| **ԳԼՈՒԽ 8. Ինքնաբացարկի մասին որոշումների բողոքարկման պրակտիկան** | |
| ՎԴՕ-ում ուղղակիորեն սահմանել ինքնաբացարկը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման իրավունքը և ապահովել դրա պրակտիկ իրագործումը: | |

| |
|---|
| **ԳԼՈՒԽ 9. Հայցի ապահովման դեպքում հնարավոր վնասների ապահովման պրակտիկան** |
| Օրենսդրորեն նախատեսել, որ դատարանը նաև երրորդ անձի միջնորդությամբ կարող է հայցվորից պահանջել եռօրյա ժամկետում տրամադրել ապահովում՝ հնարավոր վնասների հատուցման համար: |
| **ԳԼՈՒԽ 10. ՀՀ ՎԴՕ-ի 83-րդ հոդվածի կիրառման պրակտիկան (հայցադիմումին պատասխան ներկայացնելը)** |
| Միասնականացնել գրավոր պատասխան չներկայացնելու դեպքում կիրառվող իրավական հետևանքները և դրանց կիրառման չափանիշները: Սահմանել դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ: |
| **ԳԼՈՒԽ 11. Վարչական դատավարությունում գործի վարույթի կասեցումը** |
| Օրենսդրորեն նախատեսել է գործի վարույթի կասեցումը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու հնարավորություն: |
| **ԳԼՈՒԽ 12. Իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը ՀՀ վարչական արդարադատության բնագավառում** |
| Օրենսդրորեն ամրագրել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների՝ հայց ներկայացնելու իրավունքը: |
| **ԳԼՈՒԽ 13. Վարչական դատարանի կողմից գործերի քննության արդյունավետությունը** |
| 1. Ապահովել ՎԴ-ում գործերի արագ և արդյունավետ վարումը և քննությունը՝ մեծացնելով ՎԴ-ի դատավորների թիվը:<br>2. Սահմանել գործերի քննության առավելագույն դատավարական ժամկետներ: Ժամկետի խախտումը պետք է հանդիսանա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք: Ժամկետների խախտումների դեպքում պետք է նախատեսել արդյունավետ պաշտպանության միջոց:<br>3. Ձևավորել դատական նիստերի օրերի նշանակման միասնական չափանիշներ: Մասնավորապես, նիստերը պետք է նշանակվեն ըստ հայցերի մուտքագրման առաջնայնության: Առավել վաղ մուտքագրված գործերը պետք է ունենան առաջնայնություն առավել ուշ մուտքագրված գործերի համեմատ և այլն: |
| **ԳԼՈՒԽ 14. Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթը** |
| Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթով նախատեսել ժամկետի հաշվարկը խախտման պահից՝ խախտման պահ համարելով անձի նկատմամբ այդ նորմի անմիջական կիրառումը, իսկ եթե անձը որոշել է վիճարկել այն վարչական ակտը, որը կայացվել է վիճարկվող նորմատիվ ակտի հիման վրա, որպես այլընտրանք նախատեսել ժամկետի հաշվարկը վերջնական դատական ակտից հետո: |
| **Գլուխ 15. Պատասխանատվությունը վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար** |
| Ապահովել դատարանի կողմից վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ նորմերի կիրառումը և օրենքի պահանջներին համապատասխան դատական պրակտիկայի ձևավորումը: |
| **Գլուխ 16. Վարույթը վճռաբեկ դատարանում** |
| Իրավակիրառ պրակտիկայում իրացնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ կապված վարչական գործերով վճռաբեկ բողոքների քննության հետ: |